ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐՔԱԲԵՐ ԳՅՈՒՂԻ ԳՆԴԱԿՈԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Բերքաբեր գյուղի գնդակոծության մասին ահազանգը և Մարդու իրավունքների պաշտպանի ձեռնարկած միջոցները 2

2. Մարդու իրավունքների պաշտպանի պարզած տեղեկությունները 3

3. Մարդու իրավունքների պաշտպանի հիմնական հետևությունները և դիմում միջազգային կառույցներին..... 4

4. Լուսանկարների հավելված 6

1. Բերքաբեր գյուղի գնդակոծության մասին ահազանգը և Մարդու իրավունքների պաշտպանի ձեռնարկած միջոցները

2020 թվականի մայիսի 13-ին՝ ժամը 14:30-ի սահմաններում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ահազանգ է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերքաբեր գյուղի բնակիչ և տեղեկացրել, որ սույն թվականի մայիսի 13-ին՝ ժամը 13-ից 14-ի սահմաններում գյուղը գնդակոծվել է, իր համոզմամբ, ադրբեջանական զինված ուժերի կողմից և ներկայացրել է դեպքի մանրամասներ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը Բերքաբեր գյուղի գնդակոծության մասին տվյալներ արձանագրել է նաև զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներում[1]: Ուսումնասիրվել է նաև ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան պաշտոնական հայտարարությունը[2]:

Ահազանգից անմիջապես հետո Մարդու իրավունքների պաշտպանի իրավասու ներկայացուցիչն առանձնազրույց է ունեցել գյուղի այն բնակչի հետ, ում տունը վնասվել է գնդակոծության հետևանքով: Առանձնազրույցի ընթացքում քննարկվել են մանրամասներ, որոնք վերաբերում են հասցված վնասին և ընտանիքի անդամների վիճակին:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը կապվել է Տավուշի մարզպետարանի իրավասու ներկայացուցչի հետ և ստացել դեպքի վերաբերյալ տեղեկություններ:

Գնդակոծության հետևանքով ստեղծված վիճակը քննարկվել է նաև Բերքաբեր համայնքի ղեկավարի հետ, ով հաստատել է գնդակոծության փաստը և ներկայացրել դեպքին վերաբերող մանրամասներ:

Բացի դրանից, Պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրվել են Բերքաբեր համայնքի ղեկավարի և գյուղի վնաս կրած տան բնակչի տրամադրած լուսանկարները

[1] Տե՛ս օրինակ, https://news.am/arm/news/578425.html:
[2] Տե՛ս http://mil.am/hy/news/7820:

(տե՛ս, սույն արտահերթ զեկույցի լուսանկարների հավելվածը), որոնք հավաստում են գնդակոծության արդյունքում բնակելի տանը հասցված վնասները:

2. Մարդու իրավունքների պաշտպանի պարզած տեղեկությունները

Պաշտոնական, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները, Պաշտպանի աշխատակազմ ահազանգ ներկայացրած գյուղի բնակչի տվյալները, ինչպես նաև գնդակոծության հետևանքով վնասված տան սեփականատիրոջ և նրանց հետ առանձնազրույցների ու համայնքի ղեկավարի հետ քննարկման արդյունքները, ձեռք բերված լուսանկարների ուսումնասիրությունը վկայում են, որ ադրբեջանական կողմից Հայաստանի քաղաքացիական խաղաղ բնակավայրի՝ Բերքաբեր գյուղի ուղղությամբ գնդակոծության արդյունքում վնասվել է քաղաքացիական բնակչի տուն, մասնավորապես՝ ննջասենյակները:

Գնդակոծության պահին տանը գտնվել են ընտանիքի անդամները՝ երկու մանկահասակ երեխաները, երեխաների ծնողները, ինչպես նաև ընտանիքի տարեց մայրը: Գնդակոծության պահին տան բակում խաղալիս են եղել նաև հարևանների մի քանի փոքրահասակ երեխաներ:

Երեխաները վախեցել են գնդակոծությունից, նրանց ծնողներն անհանգստացած են և արդեն խուսափում են բակում երեխաներին խաղալ թույլատրելուց:

Առանձնազրույցի ժամանակ երեխաների ծնողը նաև հայտնել է, որ իրենք խիստ մտահոգված են, քանի որ անկանխատեսելիության պատճառով անորոշ է, թե երբ կարող է տեղի ունենալ գնդակոծության հերթական դեպքը:

Անհանգստությունը տան անդամների մոտ ավելի է մեծացել այն պատճառով, որ, ինչպես իրենք են նշել, ադրբեջանական զինված ուժերի կողմից այս անգամ կիրառվել է խոշոր տրամաչափի զինատեսակ:

Գնդակոծությունից վնաս կրած տան բնակիչը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին տեղեկացրել է, որ ինքը և իր մեծ ընտանիքի բոլոր անդամները, այդ թվում՝ մեծահասակները գտնվել են տանը՝ կապված նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածման դեմ պայքարի համընդհանուր կանոնների պահպանման հետ:

Հարցն այն է, որ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը և մի շարք այլ համապատասխան միջազգային կառույցներ աշխարհի երկրների համար մշակել են համընդհանուր կանոններ, որոնք պահանջում են սահմանափակել սոցիալական շփումները և ժամանակն անցկացնել տանը: Այդ կանոնների հիման վրա է, որ երեխաները դպրոց կամ մանկապարտեզ չեն հաճախում[3]:

3. Մարդու իրավունքների պաշտպանի հիմնական հետևությունները և դիմում միջազգային կառույցներին

Սույն արտահերթ զեկույցով Մարդու իրավունքների պաշտպանը արձանագրում է այն հիմնական հետևությունները, որոնք հիմնված են 2020 թվականի մայիսի 13-ի դեպքի վերաբերյալ պարզված հանգամանքների ու մինչ այդ Հայաստանի քաղաքացիական խաղաղ բնակավայրերի գնդակոծության դեպքերի արդյունքում վեր հանված օրինաչափությունների վրա:

Ըստ այդմ, սույն արտահերթ զեկույցով Պաշտպանը դիմում է մարդու իրավունքների ոլորտի միջազգային կառույցներին և հիմք ընդունելով այս պահին ձեռք բերված բնույթով հավաստի տեղեկությունները՝ հրավիրում է նրանց ուշադրությունը Բերքաբեր գյուղի գնդակոծության փաստին ու ակնկալում դատապարտող վերաբերմունք՝ հաշվի առնելով, որ՝

[3] Տե՛ս օրինակ, https://www.who.int/emergencies/diseases/novel-coronavirus-2019/advice-for-public:

1) գնդակոծությունը տեղի է ունեցել քաղաքացիական խաղաղ բնակավայրի, այն է՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերքաբեր գյուղի ուղղությամբ՝ ցերեկային ժամի՝ 13:00-14:00-ի սահմաններում.

2) գնդակոծությունը տեղի է ունեցել խոշոր տրամաչափի զինատեսակի կիրառությամբ.

3) գնդակոծությունն առաջացրել է վախ երեխաների և անհանգստություն նրանց ծնողների մոտ.

4) գնդակոծությունն առաջացրել է երեխաների ծնողների անհանգստությունը՝ նման միջադեպի անկանխատեսելիության և անորոշության պատճառով.

5) նոր կորոնավիրուսի (COVID-19) համաճարակի կանխարգելման և դրա տարածման դեմ պայքարի համընդհանուր կանոններն ակնհայտորեն վկայում են գնդակոծությամբ Հայաստանի քաղաքացիական խաղաղ բնակավայրին՝ Բերքաբեր գյուղին և գյուղի բնակիչների կյանքին և առողջությանը, նրանց գույքին վնաս հասցնելու մտադրության մասին.

6) գնդակոծությունը տեղի է ունեցել գյուղի խաղաղ բնակիչների, այդ թվում՝ երեխաների և տարեցների կյանքի ու առողջության, նրանց գույքի համար ակնհայտ վտանգավոր եղանակով.

7) 2020 թվականին Հայաստանի խաղաղ բնակավայրերը գնդակոծելու արդեն իսկ արձանագրված մի շարք դեպքերը վկայում են դրանց կրկնվելու իրական վտանգի մասին:

4. Լուսանկարների հավելված